ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՎՍԵՓ ԴԻՆԻԲԵԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու անտիպ կոնդակների ու նամակների սևագրություններն ուսումնասիրելու ժամանակ մեր ուշադրությունը գրավեց կաթողիկոսի քարտուղարներից մեկի՝ Անանիա սարկավագի կողմից 1781 թ. նոյեմբերին կատարված մի նամակի համառոտագրությունը, որն ամբողջովին վերաբերում է Թիֆլիսահայ դիվանագետ և ճանապարհորդ Հովսեփ Դինիբեկյանին։ Հետևելով իր նախորդի՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրինակին, Ղուկաս Կարնեցին կաթողիկոս ընտրվելու ժամանակներից մինչև իր մահը (1780—1799), հատուկ մատյանների մեջ կանոնավոր կերպով գրանցել է տվել իր առաքած նամակների ու կոնդակների բովանդակությունները և սևագրությունները։ Այդ ամենը, պահպանված մյուս նյութերի հետ միասին, արժեքավոր աղբյուր են XVIII դարի Հայաստանի, ինչպես և շրջակա երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունն ուսումնասիրելու համար[1]։ Մոտավոր հաշվումներով Ղուկաս Կարնեցուց մեզ հասած նամակների ու նրանց համառոտագրությունների թիվը հասնում է 6000-ի, որոնցից առայժմ հրատարակված է միայն մի փոքրիկ մասը (220 նամակ և 150 համառոտագրություն)։ Մաշտոցի անվան Մատենադարանում աշխատանքներ են տարվում այդ նյութերի առաջին հատորը հրատարակելու ուղղությամբ. դա փաստորեն շարունակությունը կհանդիսանա վաստակաշատ բանասեր Գյուտ Աղանյանի հրատարակած «Դիվան հայոց պատմության» մեծարժեք ժողովածուի։ Ահա այդ աշխատանքի ընթացքում, ի թիվս ուշագրավ այլ նյութերի, երևան եկավ նաև Հովսեփ Դինիբեկյանին վերաբերող համառոտագրությունը։

Հարկ է նշել, որ Հովսեփ Դինիբեկյանի վերաբերյալ նյութերն այնքան էլ շատ չեն և ոչ ոք մինչև այժմ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձրել այդ հետաքրքրական անձնավորության կյանքն ու գործունեությունը։ Եղած նյութերից հայտնի է, որ նա ապրել ու գործել է Թբիլիսիում, ծառայել է վրաց թագավոր Հերակլ II-ի արքունիքում և պաշտոնական առաքելությամբ հաճախակի ուղևորություններ է կատարել դեպի Հնդկաստան։ Հերակլ թագավորը և հայոց կաթողիկոսները նրա միջոցով նամակագրական

---

[1] *Ղուկաս Կարնեցու գրագրությունների արժեքը փորձել ենք ներկայացնել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժանմունքին կից տեքստաբանական հանձնաժողովի և Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Կ. Ս. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի նախաձեռնությամբ 1969 թ. նոյեմբերին Թբիլիսիում գումարված տեքստաբանության և հին ձեռագրերի ուսումնասիրման հարցերին նվիրված նստաշրջանում տրված զեկուցմամբ, որը հրապարակվել է վրացական ակադեմիայի «Մացնե» գիտական պարբերականում (տե՛ս* В. Р. Григорян, Архив армянского католикоса Гукаса Карнеци как первоисточник по истории Закавказья последних десятилетий XVIII века, „მაცნე", ენისა და ლიტერატურის სერია, 4, 1972, *էջ 172—176)։*

կապ են պահպանել հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկի՝ Մադրասում ապրող Շահամիր Շահամիրյանի հետ։ Այդ հեռավոր և վերին աստիճանի վտանգավոր ուղևորությունները, որոնք կապված էին մեծամեծ դժվարությունների հետ, դարձել էին Դինիբեկյանների մասնագիտությունը։ Ինչպես կտեսնենք, Հովսեփի նախնիները ևս ունեցել են թագավորներից ստացած արտոնություններ այդօրինակ ուղևորություններ կատարելու համար։ Անտարակույս, առևտուրը նրանք համատեղում էին դիվանագիտական հանձնարարություններ կատարելու հետ։ Հովսեփի մահից հետո վրաց թագավորի հանձնարարությամբ մի քանի անգամ դեպի Հնդկաստան է ուղևորվել Հովսեփի որդին՝ Ռաֆայել Դանիբեկովը (Դանիբեկյանը)[2], որը նույնպես նամակագրական կապ էր ապահովում հնդկահայ գործիչների ու վրաց արքունիքի միջև։ 1815 թ. Մոսկվայում լույս ընծայվեցին Ռ. Դանիբեկովի ուղեգրությունները, որոնք վերջերս ունեցան մի շարք հրատարակություններ։

Ռաֆայել Դանիբեկովի ուղեգրությունները ռուսերենի հետ միասին հրատարակվել են նաև անգլերեն և հինդի լեզվով։ Այդ հրատարակությունն իրականացրել է աշխարհագրական գիտությունների դոկտոր Լ. Ռ. Մարուաշվիլին, որը Ռ. Դանիբեկովի ուղեգրությունների ուսումնասիրմամբ զբաղվում է 1946 թ.։ Չնայած այն բանին, որ նրա ձեռքի տակ եղած փաստաթղթերում տեղեկություններ կան Ռաֆայելի հոր՝ Հովսեփի մասին, բայց նա այդ նյութերը չի լրացրել հայկական սկզբնաղբյուրներում պահպանված վկայություններով, որոնց վրա ուշադրություն է հրավիրել պրոֆ. Մ. Տեր-Ավետիսյանը դեռևս 1940 թ.[4]։

Նախքան Ղուկաս Կարնեցու գրություններում Հովսեփ Դինիբեկյանի մասին պահպանված նյութերին անցնելը, ի մի բերենք այն ամենը, ինչ հայտնի է նրա մասին։

Հովսեփ Դինիբեկյանի որդուն՝ Ռաֆայելին Քարթլ-Կախեթի թագավոր Գեորգի XII-ի 1799 թ. սեպտեմբերի 14-ին տրված հրովարտակից իմանում ենք, որ Դինիբեկյանների ընտանիքը շահերից ու թագավորներից ստացել է շնորհագրեր, և որ Գեորգիի պապը՝ Թեյմուրազ թագավորը, Ռաֆայելի պապին, այսինքն Հովսեփի հորը շնորհել է դաղբաշու (տասնապետի) կոչում, իսկ Հերակլ թագավորը Հովսեփին տվել է խութասիս-թավիի (հինգհարյուրապետի) կոչում՝ համապատասխան ռոճիկով[5]։ Իր հերթին այդ կոչումը Գեորգի XII թագավորը շնորհում է Ռաֆայելին, նրա ժառանգներին ու եղբորը՝ Հովսեփին։ Նույն հրովարտակից երևում է, որ Դինիբեկյանները ունևոր ընտանիք են եղել, ունեցել են տներ, այգիներ, արոտավայրեր, ինչպես և ձեռք են բերել ճորտեր։ Նույն փաստաթղթի «հավելվածում» հիշատակվում է Հով-

---

2 Հրապարակվող փաստաթղթերում Ռաֆայելի հոր՝ Հովսեփի ազգանունը գրված է Դինիբեկյան։ Կարելի է ենթադրել, որ դա ազգանվան սկզբնական ձևն է և որ այն հետագայում է դարձել Դանիբեկյան (Դանիբեկով)։

3 «Путешествие Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795—1827)». М., 1969.

4 Մ. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար (Շամիր աղա Շահամիրյանի, Ղուկաս կաթողիկոսի և վրաց Հերակլ թագավորի գրագրությունները). «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. 13, Երևան, 1940։

5 «Путешествие Рафаила Данибегашвили...», էջ 66։

սեփի կնոջ՝ Ռոզայի անունը[6]։ Ավելի ուշ՝ 1807 թ. նոյեմբերի 6-ին Հովսեփ Դինիբեկյանի որդու (Հովսեփի) թոշակ ստանալու համար գրված մի դիմումում հիշատակվում է Հերակլ II-ից Հովսեփ Դինիբեկյանի ստացած ռոճիկի չափը (մթերքներով ու դրամով՝ տարեկան 40 թուման)[7]։

Դինիբեկյանները վրացահայ կաթոլիկներից էին, բայց մշտապես կապված էին Էջմիածնի ու նրա կաթողիկոսների հետ։ Թե՛ Հովսեփը և թե՛ նրա որդիները հաճախ էին լինում Էջմիածնում, կատարում կաթողիկոսների հանձնարարությունները։ Անհրաժեշտության դեպքում կաթողիկոսները հանձնարարական նամակներ էին տալիս նրանց[8]։

Հովսեփ Դինիբեկյանի դեպի Հնդկաստան կատարած ուղևորությունների մասին Ղուկաս կաթողիկոսի և Շահամիր Շահամիրյանի նամակներում եղած տեղեկությունները գրավել են գիտնականների ուշադրությունը, որոնք և հակիրճ ծանոթագրություններ են թողել Հովսեփի մասին։ «Հովսեփ հարյուրապետը,— գրել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանը,— Հերակլ թագավորի կողմից ուղարկված էր Հնդկաստան Շահամիրյանի մոտ տանելով հետը Լոռին Շահամիրյանին նվիրելու հրովարտակը...»։ «Հրովարտակը Հնդկաստան տանելու համար Հերակլ Բ-ն ուղարկում է հարյուրապետ Հովսեփին, որի անունը հաճախ կրկնվում է Ղուկաս կաթողիկոսի և Արղությանի գրություններում»[10]։ Հենվելով Ղուկաս Կարնեցու անտիպ նամակների վրա, պատմաբան Ա. Ռ. Հովհաննիսյանը ցույց է տվել, որ վրաց թագավորի հատուկ պատվիրակ, թիֆլիսեցի հարյուրապետ Հովսեփը Հնդկաստան էր տարել Հերակլ II-ի 1786 թ. մարտի 22-ի հրովարտակը, որով իշխանական կոչում էր շնորհվում Շ. Շահամիրյանին և վերադարձին իր հետ բերել էր վերջինիս պատասխան նամակը և թագավորի համար տրված նվերները[11]։ «Հինգհարյուրապետ Հովսեփ Դանիբեգյան,— ծանոթագրում է պատմաբան Ռ. Ա. Աբրահամյանը,— վրացական արքունիքի քաղաքական, դիվանագիտական աչքի ընկնող դեմքերից։ Շահամիրյանի հետ կապեր հաստատելու համար Հերակլի կողմից առաքվել է Հնդկաստան։ Դանիբեգյանն էր, որ Հնդկաստան նարավ ոչ միայն Շահամիրյանին վրաց իշխանի տիտղոս շնորհելու արքայական հրովարտակը, այլ նաև Արղությանի, կաթողիկոսի և բազմաթիվ այլ անձանց նամակները»[12]։

Բանասեր Պ. Մուրադյանը վերջերս հրապարակելով նորահայտ նյութեր Ռաֆայել Դանիբեկովի ու նրա ուղեգրության վերաբերյալ, ուշադրություն է դարձրել նաև Ռաֆայելի հոր՝ Հովսեփի վրա և նշել այն բոլոր աշխատությունները, որոնցում հիշատակված է Հ. Դինիբեկյանը[13]։

---

6 Նույն տեղում, էջ 67։

7 Նույն տեղում, էջ 69։

8 П. М. Мурадян, Новые материалы о Рафаиле Даниибегове. «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 3, էջ 176։

9 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 83։

10 Նույն տեղում, էջ 39։

11 А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, էջ 153։

12 Ռ. Ա. Աբրահամյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, էջ 153։

13 П. М. Мурадян, նշվ. աշխ., էջ 184։

Հովսեփ Դինիբեկյանը Հնդկաստան է ուղևորվել մի քանի անգամ։ 1785 թ. հոկտեմբերի 15-ին Հերակլ II-ին ուղղած իր նամակում Շահամիր Շահամիրյանը գրում է, որ այդ ժամանակ Հովսեփը ժամանել է Հնդկաստան։ Պարզվում է, որ Հովսեփն իր հետ տարած է եղել Հերակլի նամակը՝ ուղղված թուրքաց սուլթանին։ Այդ նամակը Հ. Դինիբեկյանը հանձնել է Բաղդադի փաշային։ Ինչ-ինչ նկատառումներով վերջինս Հովսեփին երեք ամիս պահում է (գուցե և կալանավորում) Բաղդադում, որից հետո թույլ է տալիս շարունակել ճանապարհը դեպի Հնդկաստան։ «Բաղդատու փաշայն,— կարդում ենք այդ նամակում,— ստացաւ Յովսէփոս հինգհարիւրապետէս օրինակ նամակի շնորհաց բոց, որ առ իս և առաքեաց Կոստանդնուպօլիս ի սպաս սուլթանի, և արգելեաց հինգհարիւրապետին Բաղդատ երիս ամիս ժամանակաւ, և ապա արձակեաց սա մեզ»[14]։

Նույն նամակից տեղեկանում ենք, որ Հովսեփը Հնդկաստանից մեկնել է 1785 թ. դեկտեմբերի կեսերին «զոր ինչ այլ իմն հարկաւորութիւն այսուհետև գրեցելոց եմ ձեռամբն պատուելի Յովսէփի հինգ հարիւրապետաւ, որպէս հաւատացեալ եմ, զի նա ելանելոյ ի մէնջ միջոց երկու ամիս ժամանակաւ»[15]։

Դատելով եղած նյութերից, կարելի է ասել, որ սա Հովսեփ Դինիբեկյանի հերթական ուղևորություններից մեկն էր դեպի Հնդկաստան, մինչ այս ճանապարհորդությունը նա արդեն եղել էր Հնդկաստանում, իսկ հետագայում նա դարձյալ այցելում է այդ հեռավոր երկիրը։ Շ. Շահամիրյանի 1787 թ. հոկտեմբերի 15-ին Մադրասից Ղուկաս կաթողիկոսին ուղարկած նամակից տեղեկանում ենք, որ տեղ հասնելուց հետո Հովսեփը կրկին ճանապարհ է ընկնում դեպի Հնդկաստան՝ բերելով իր հետ մի շարք նամակներ։ Այսպես, նրա միջոցով Շ. Շահամիրյանը ստացել է Ղուկաս կաթողիկոսի 1785 թ. մայիսի 22-ին և 1786 թ. փետրվարի 5-ին գրած նամակները։ Հ. Դինիբեկյանը Հնդկաստան էր տարել նաև ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Սրդությանի և այլ անձանց նամակները[16]։ Շահամիր Շահամիրյանը Հովսեփ Դինիբեկյանից բանավոր կերպով լուրեր է ստանում Անդրկովկասի վիճակի մասին՝ «ի բերանէ պարոն Յովսեփոս հինգհարիւրապետէ լուաք»[17]։ Այս ժամանակ է նա բերել Հերակլ II-ի 1786 թ. հրովարտակը[18]։

1789 թ. Ղուկաս կաթողիկոսը Շ. Շահամիրյանին գրել է. «Իսկ ի միւս թուղթդ գրեալ էիր զվերադառնալն այտի հարիւրապետ Յովսէփին թիֆլիզեցւոյ»[19]։ Դժվար է ասել, թե որ ժամանակներին է վերաբերում Հովսեփի վերադառնալու մասին այս հիշատակությունը, բայց մի այլ նամակ ավելի պարզություն է մտցնում հարցի մեջ. երևում է, որ 1792 թ. մայիսին Հովսեփը գտնվել է Մադրասում. «Վասն որոյ այժմում,— գրում է Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսին 1792 թ. մայիսի 14-ին,— որ ընթերցայ ի նամակի քում, զլուրն Յովսէփ հարիւրապետին, և զյանձնարարութիւնն քոյին Պատուականութեան զկարապետ վրաց վաճառականին եղև ի սրտի իմում

14 Ռ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 136։
15 Նույն տեղում, էջ 137։
16 Նույն տեղում, էջ 128—129։
17 Նույն տեղում, էջ 129։
18 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 39։
19 Նույն տեղում, էջ 64։

փոքրիկ բան խղճմտանաց... Նոյն Յովսէփ հարիւրապետն ի ժամանակի գալստեան նորա առ մեզ հանդիպեալ է Քոյին սրբութեան, որպէս այս Կարապետ վաճառականս...»[20]։ Հայտնի չէ, թե Հովսեփ Դինիբեկյանը ե՞րբ է հայրենիք վերադարձել իր այս նոր ուղևորությունից։ Կարծում ենք դեպի Հնդկաստան Հ. Դինիբեկյանի կատարած ուղևորությունների հարցը դեռևս կարոտ է ուսումնասիրման։

Վրաց թագավորի հանձնարարությամբ ուղևորություններ կատարելով Հնդկաստան, Հովսեփ Դինիբեկյանը նամակագրական կապ է ապահովել մի կողմից Շ. Շահամիրյանի, մյուս կողմից՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի, Հովսեփ Արղությանի և այլոց հետ։ Հայտնի իրողություն է, որ հնդկահայ գաղութն այն ժամանակ հայ ազատագրական շարժման կարևոր կենտրոններից էր և Հ. Դինիբեկյանի դերը որպես «կապավորի» դժվար է գերագնահատել։ Չի կարելի կարծել, որ Հ. Դինիբեկյանը հանդես է եկել սոսկ նամակներ ու նվերներ տեղափոխողի համեստ դերով։ Նա, անտարակույս, քաջատեղյակ է եղել հայրենի երկիրն օտար տիրապետությունից ազատագրելու ուղղությամբ հնդկահայ հայրենասերների ծավալած գործունեությանը և իր հնարավորության սահմաններում ձգտել է օգտակար լինել նրանց։ Մի շարք անձանց նամակները Շ. Շահամիրյանին հանձնելուց բացի, նա բանավոր տեղեկություններ է հաղորդել նրան Հայաստանի ու շրջակա երկրների քաղաքական վիճակի մասին, մի բան, որ չափազանց կարևոր է եղել հեռավոր Մադրասում ապրող Շ. Շահամիրյանի ու նրա համախոհների համար։ Պետք է կարծել, որ Շ. Շահամիրյանը իր տպարանում հրատարակված գրքերը նաև Հ. Դինիբեկյանի միջոցով է ուղարկել Ղուկաս կաթողիկոսին, Հերակլ թագավորին, Ղարաբաղի մելիքներին և այլ անձանց։ Ինչպես կտեսնենք, Հ. Դինիբեկյանի միջոցով է էջմիածին ուղարկվել Շ. Շահամիրյանի պատվերով հրատարակված Հայաստանի քարտեզը։

Հետաքրքրական է, որ Լազարյանները ևս, որոնք այդ ժամանակ ազատագրական շարժման ռուսահայ շրջանակի ամենաեռանդուն ներկայացուցիչներից էին, ծանոթ են եղել Հ. Դինիբեկյանի հետ[21] և հավանորեն նրա միջոցով նամակագրության մեջ են եղել Մադրասի գործիչների հետ։

Առայժմ հայտնի չէ Հ. Դինիբեկյանի մահանալու թվականը։ Հաստատորեն կարելի է ասել, որ դա տեղի է ունեցել մինչև 1799 թ. սեպտեմբեր ամիսը, որովհետև սեպտեմբերի 14-ին Ռաֆայել Դանիբեկովին տված հրովարտակի մեջ վրաց Գեորգի XII թագավորը գրել է. «և քո հայրը՝ Հովսեփը մահացել է մեր հոր և իմ մոտ ծառայության մեջ լինելով»[22]։ Եթե Հ. Դինիբեկյանը ծառայել է նաև Գեորգի XII-ի մոտ, ուրեմն նա վախճանվել է նրա գահակալումից հետո (1798 թ.) և նախքան այս հրովարտակի գրվելը (1799 թ. 14 սեպտեմբերի)։

Ղուկաս Կարնեցու քարտուղարի 1781 թ. նոյեմբերի 9-ին կատարած գրառումից երևում է, որ Հովսեփ Դինիբեկյանը Հնդկաստան է ուղևորվել երեք տարի առաջ՝ այսինքն 1778 թ. և վերադարձել 1781 թ. աշնանը։ Նա եկել էր Բաքվի վրայով, որովհետև տեղեկություն կա այն մասին, որ Բաքվի խանը մի առ ժամանակ ձերբակալել էր նրան։ Հնդկաստանից կաթողիկոսի

20 Նույն տեղում, էջ 83։

21 Է. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, Երևան, 1977, էջ 49։

22 «Путешествие Рафаила Даннибегашвили...», էջ 66։

համար նա բերել էր նամակներ և նվերներ։ Բայց մինչև էջմիածին գալը, նա պետք է սկզբում լիներ Հերակլ II թագավորի մոտ։ Ահա այդ ամենի մասին Հովսեփ Դինիբեկյանը նամակով հայտնում է կաթողիկոսին։ Պատասխան նամակում Ղուկաս Կարնեցին գրում է, որ իր գործերն ավարտելուց հետո Հովսեփը գա էջմիածին, իսկ եթե նրա գալը հետաձգվի, ապա թող իր բերած իրերը կնքված վիճակում հանձնի վիրահայոց հոգևոր առաջնորդ Կարապետ վարդապետին և էջմրածնի վեքիլ (գործակալ) տեր Ղազարին, որոնք և դրանք կհասցնեն իրեն։

Այդ կապակցությամբ Ղուկաս կաթողիկոսը նամակ է գրել նաև Կարապետ վարդապետին և համապատասխան կարգադրություն արել Հնդկաստանից Հ. Դինիբեկյանի բերած իրերը էջմիածին հասցնելու վերաբերյալ։

1785 թ. մայիսի 25-ին Շ. Շահամիրյանին Ղուկաս կաթողիկոսի ուղղած նամակի սևագրությունից երևում է, որ Հ. Դինիբեկյանը Շ. Շահամիրյանից բերել էր երկու նամակ, որոնցից առաջինը (գրված 1779 թ.) հասցեագրված էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսին։ Այդ նամակը, ինչպես և երկու քարտեզ, տրված էին եղել ոմն Ասլանի, իսկ վերջինս էլ հանձնել էր Հ. Դինիբեկյանին։ Երկրորդ նամակը (1780 թ.), որ նույնպես հասցեագրված էր Սիմեոն կաթողիկոսին, նվերներով հանդերձ, Շ. Շահամիրյանը հանձնել էր Հ. Դինիբեկյանին։ Խոսք կա նաև երրորդ նամակի մասին (1782 թ.), որը, սակայն, էջմիածին է հասցրել Հնդկաստանից նոր վերադարձած Նվիրակ Գրիգոր վարդապետը։ Կաթողիկոսը Շ. Շահամիրյանին շնորհակալությամբ հայտնում է Հովսեփ հարյուրապետի միջոցով ուղարկված նվերների ստացման մասին, թվարկում է դրանք (վեց հակ տարբեր գույնի կտավներ և մահրամա՝ սրբիչի նմանվող կտոր)։ Հիշատակվում է նաև «զարմանալի աշխարհացոյցն», որն անմիջապես կախվում է պատից «հանդեպ աչաց, միշտ վայելեմք յիշատակելով զսիրելի բարեօք յիշեցմամբ»։

Ստորև բերում ենք Հ. Դինիբեկյանին Ղուկաս կաթողիկոսի հասցեագրած նամակի համառոտագրությունը, Կարապետ վարդապետին ուղարկված նամակի համառոտագրության այն մասը, որտեղ խոսվում է Հ. Դինիբեկյանի մասին, ինչպես և մի հատված Ղուկաս կաթողիկոսի՝ Շ. Շահամիրյանին ուղղած նամակից։

Ա.

«[1781 թ. 9 նոյեմբերի] ԹՈՒՂԹ ԵՎՍ ԱՌ ԴԻՆԻԲԷԿԵԱՆՑ ԽԱՏԻՆԻ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՅՈՎՍԷՓՆ ԳՐԵԱՑ Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆՈՐԻՆ Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ Թ(9) ԵՎ Ի ԳԵԱՆՋԱՅՈՒ ԳՐԵԱԼ ԹՂԹՈՅՆ։

Եւ արդ, զսմանէ այսպէս է գիտելի, զի սա յառաջ քան զԳ (3) ամս դնացեալ էր ի Հնդիկս և այժմ վերադարձեալ անտի հանդերձ թղթովք ի նուիրակէն մերմէ առ սրբազանն և յրնծայիւք յոմանց առ Հերակլ արքայն, նաև առ սրբազանն ևս, եկեալ էր հասեալ ի Բաքու, յորոյ իշխողէն ըմբռնեցեալ էր և արձակեցեալ ապա։ Իսկ այժմ գրեալ էր սրբազան վեհին, թէ զթուղթս ունիմ ի նուիրակէն և զընծայ ևս ունիմ անտի և այլն։ Բայց ոչ կարեմ գալ յայդր, մինչ ոչ նախ գնացեալ տեսից զարքայն։ Ապա յետ տեսանելոյս զնա, գալոց եմ և զորս ընդ իս, ինքնին բերելոց եմ։

Առ որ գրեաց սրբազանն, թէ եթէ մինչև ցարդ զհոգալի բանսդ տեսե՞ր յայդր, շուտով զբերեալսդ առեալ հասուսցես մեզ։ Իսկ եթէ քո յայդր մնալն

յամիցի, զայդոսիկ քոյինդ կնքով կնքեալ յանձնեսցես առաջնորդին տեղւոյդ՝ Կարապետ վարդապետին և գործակալին մերոյ՝ տէր Ղազարին, որք ամբողջ հասուսցին առ մեզ։

Դաղափարն թղթոյս այսորիկ ի վերայ կտոր թղթոյ իրիք է»[23]։

Բ.

«[1781 թ. 9 նոյեմբերի] ԹՈՒՂԹ ԵՎՍ ՅԱՏԿԱՊԷՍ ԱՌ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԳՐԵԱՑ, ՅՈՐՈՒՄ ՆԱԽ ՅԻՇԵԱՑ, ԹԷ ԹՈՒՂԹԴ ԷՀԱՍ ԸՆԴ ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐՈՒՄ ԵՐԿԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԳՐԵՑԱՔ Ի ՎԵՐԱՅ ՔՌ ԵՎ ՏԷՐ ՂԱԶԱՐԻՆ ԱՀԱ, ԶՈՐԻ ՏԵՍԱՆԵԼՈՅ ԷՔ։

...Եւ ապա զոր ինչ գրեաց առ Դինիբէկեանց Խատինի որդի Յովսէփն, սասս ի Հնդու։ բերեալ թղթոցն (որ ահա ի վերդ ի թուղթն նորա յայտնի է) սմա ևս ծանոյց. թէ զայս ինչ գրեցաք նմա և զթուղթն յղեցաք առ ձեզ, դու և տէր Ղազարն տաջիք նմա, եթէ գալոյ լինի, գայցէ, ապա թէ ոչ, զգրեանսն և զաւանդն մեր, որ առ նա, առեալ շուտով ընդ հաւատարմի յղեսջիք։

Գրեցան և յղեցան թուղթքս ընդ Սիմէօն վարդապետին, յամսոյս Թ(9)»[24],

Գ.

«[1785 թ. 22 մայիսի]—ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ Ի ՀՆԴԻԿՍ Ի ՄԱՏՐԱՍՆ ԱՌ ՇԱՀԱՄԻՐ ԱՂԱՅՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑ ՆՈՐԻՆ ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿՍ ԺԱՄԱՆԱԿՍ ԴՐԵՑԵԼՈՅ ԱՌ ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԵՎ ԱՌ ՆՈՐՈԳ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԱՊԵՏՍՍ ՄԵՐ։ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ՅԱՌԱՋ ԵՎ ԱՅԺՄ ԸՆԴ ՆՈՒԻՐԱԿ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅՂԵԱԼ ԸՆՄԱՅԻՑՆ (ՅԻՇԵԼՈՎ ԵՎ ԶՄԻՆՉԵՎ ՅԱՅԺԸՄ ԹՈՒՂԹ ԶԳՐԵԼՈՅ ՊԱՏՃԱՌՆ) ԵՎ ՅՈՐԴՈՐՈՒՄՆ Ի ՍԷՐ ԵՎ Ի ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՎ ԻՒՐ։ ԵՒ ՎԱՍՆ ՆՈՐ ՆՈՒԻՐԱԿԻՆ ԵՎՍ ՅԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

... Զի Գ(3) թուղթք ազնուոյդ, որոց երկուքն առ Հոգելոյս Հայրապետն Ե. մին ի վերայ մեր գրեցեալ, հասին առ մեզ։ Առաջինն էր ի 1779 թուոջն Փրկչին գրեցեալ և հանդերձ Բ(2) նորատիպ աշխարհացուցիւ յանձնեալ ումեմն Ասլանի և ի նմանէ ևս յանձնեցեալ հարիւրապետ Յովսէփին, որոյ ձեռամբ մեզ հասեալ եղև։ Երկրորդն էր ի 1780 թուոջն գրեցեալ և Ա(1) կապոց ամանաթով հանդերձ տուեալ նոյն յիշեալ Յովսէփին, զոր ընդ առաջին թղթոյդ և աշխարհացուցացդ ի միասին իսկ հասոյց առ մեզ։ Եւ ի մէջ կապոցին, որ ըստ կնքեալ սահմանոյդ գոյին Բ(2) սպիտակ կտաւ, Բ(2) գունաւոր կտաւ, և Բ(2) թոփ մահրամայք, սիրով բազմաւ և առաւել շնորհակալութեամբ ընկալաք ի վայելս և օրհնեմք զառատասէր սիրելիդ բերանալիր օրհնութեամբ և զզարմանալի աշխարհացոյցն ևս կախեալ զորմոյ հանդէպ աչաց, միշտ վայելեմք յիշատակելով զսիրելիդ բարեօք յիշեցմամբք։

Իսկ երրորդ թուղթդ, գրեցեալ ի 1782 թուոջն ընդ նուիրակ Գրիգոր համեստափայլ վարդապետին, էհաս ի ձեռս մեր, զոր առ մեզ իսկ էիր գրեալ։ Զոր և մեք առ ընկալեալ սիրով ընթերցաք և իմացաք զամենայն գրեալսդ»[25]։

Ինչպես տեսնում ենք, Ա և Բ նամակներն ուղարկվել են գյանջեցի Սիմեոն վարդապետի միջոցով, որը բերել էր Կարապետ վարդապետի նամակը։

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 126բ։

24 Նույն տեղում, էջ 126բ—127ա։

25 Նույն տեղում, ձեռ. № 2803, էջ 737, 739—740։

Կարելի է կարծել, որ նրա ձեռքով է տեղ հասցվել նաև Ղուկաս կաթողիկոսին հասցեագրված Հ. Դինիբեկյանի նամակը։

Երկրորդ նամակի համառոտագրության վերջում նշված է նամակների շարադրման և առաքման ժամանակը՝ «յամսոյս Թ», որը դժվար չէ ճշտել մյուս նամակների օգնությամբ. դա տեղի է ունեցել 1781 թ. նոյեմբերի 9-ին։

Դժբախտաբար, չհաջողվեց գտնել Հ. Դինիբեկյանի նամակը։ Ժամանակի փորձություններին, հավանաբար, չի դիմացել նաև Ղուկաս կաթողիկոսի նամակը՝ հասցեագրված Հովսեփ Դինիբեկյանին։ Ինչպես երևում է վերը բերված համառոտագրությունից, Ա նամակի սևագրությունը գրվել է ոչ թե այդ նպատակի համար պահվող հատուկ մատյանում, այլ «ի վերայ կտոր թղթոյ», որի պատճառով և այն բացակայում է Ղուկաս Կարնեցու դիվանում։ Բայց և այնպես, այս վավերագրերը բավարար չափով պատկերացում են տալիս թե՛ Հովսեփ Դինիբեկյանի նամակի և թե՛ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի գրած պատասխանի մասին։

Այժմ մի քանի խոսք Հ. Դինիբեկյանի միջոցով Շահամիր Շահամիրյանի ուղարկած նվերների մասին։ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կարգադրությամբ էջմիածնի վանքի ստացած նվերները գրանցելու համար ստեղծվել էր հատուկ մատյան, որը պահպանվել է և այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում[26]։ Այդ ձեռագիր մատյանում Սիմեոնի օրոք կատարված գրանցումներն այնքան էլ շատ չեն, որովհետև այն ստեղծվել էր նրա մահից ընդամենը մեկ տարի առաջ։ Ղուկաս կաթողիկոսի գահակալության ողջ ընթացքում մուտքի այդ տետրակում գրանցումները կանոնավոր կերպով կատարված են և ահա այնտեղ տեղեկություն կա նաև Հովսեփ Դինիբեկյանի բերած իրերի վերաբերյալ։ Մատյանի այն բաժնում, ուր գրառված են «Ընծայք քահանայից, իշխանաց, վաճառականաց, ուխտաւորաց և այլոց», գտնվում է Շահամիր Շահամիրյանի ուղարկած նվերների ցուցակը։ Պարզվում է, որ Հնդկաստանից «Թիֆլիսեցի ֆռանգ Յոսեփի» բերած իրերը էջմիածին են հասել 1782 թ. հունվարի վերջին՝ «ի յունվարի ելն», այսինքն, վերը բերված նամակներից շուրջ երեք ամիս անց։ Ինչպես տեսանք, Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսին ուղարկել էր տարբեր տեսակի կտորներ՝ ղատաք, սպիտակ կտավ, կապույտ մահրամա, ընդամենը վեց հակ։

Ստորև բերում ենք նաև մուտքի մատյանում կատարված այդ գրանցումը։

«Ի ՌՄԼԱ (1782) ...Ի Հինդ բնակեալ Շամիր աղայն, ձեռամբ Թիֆլիզեցի ֆռանգ Յոսեփին յղեալ էր. Բ (2) թոփ հնտու կապոյտ ղատաք, Բ (2) թոփ սպիտակ կտաւ, Բ (2) թոփ կապոյտ մահրամայք, որոց Ա (1) թոփն ընդ տեկիրմի է։ Ի յունվարի ելն»[27]։

Էջմիածնի վանքի ելից մատյանում կատարված գրանցումներից մեկից պարզվում է, որ այդ նվերները էջմիածին էր հասցրել ինքը՝ Հ. Դինիբեկյանը։ Ի նշան շնորհակալության 1782 թ. փետրվարի 12-ին Հ. Դինիբեկյանին ընծայվել է մի ընտիր վերարկու, որը դրանից երեք տարի առաջ՝ 1779 թ. նոյեմբերի կայակցությամբ նվեր էր բերել Երևանի խանը։ Ստորև ամբողջությամբ բերում ենք այդ գրանցումը.

---

26 Նույն տեղում, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 36։

27 Նույն տեղում, էջ 43։

«Թիֆլիզեցի ֆռանդ Յոսեփն ի գալն ի սուրբ Աթոռս և բերելն զընծայն Շահամիր աղային, որոյ ետուք Ա(1) զէրպապ կապայ, որ էր մեր խանի տուեալն ի ՌՄԻԸ (1779) թուոջն նաւռօսին։ Մեք ի փետրվարի ԺԲ(12) ետուք նմայ»[28]։

Նվերների մատյանում քարտեզների ստացման վերաբերյալ գրանցում չի կատարված, որովհետև այդ կարգի նվերները մուտքագրելու սովորություն չկար։ Ո՞նչ քարտեզ էր դա, որ այդպես սիրով ընդունվել էր կաթողիկոսի կողմից։ Հայտնի է, որ Շ. Շահամիրյանի պատվերով, ի հիշատակ նրա վաղամեռ որդու՝ Հակոբ Շահամիրյանի, 1778 թ. Վենետիկում, Մխիթարյան միաբանության տպարանում լույս էր ընծայվել Հայաստանի քարտեզը՝ «Աշխարհացոյց Հայաստանեայցը», որը ժամանակագրական կարգով վեցերորդ հայկական քարտեզն էր աշխարհում։ Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ «Աշխարհացոյցի» հրատարակությունը սերտ կապ ուներ Մադրասի հայրենասիրական խմբակի ընդհանուր նպատակների հետ և կարծեք հանդիսանում էր «Նոր տետրակ ոչ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերի հավելվածը։ Այն կոչված էր նաև գործնական օգնություն ցույց տալու հայրենի երկրի ազատագրությանը նախանձախնդիր անձանց։

Ղուկաս Կարնեցու նամակներում, ինչպես նկատել է Ա. Ռ. Հովհաննիսյանը[29], տեղեկություններ կան այն մասին, որ Շ. Շահամիրյանն այդ քարտեզներից մի քանի օրինակ, իր այլ հրատարակությունների հետ միասին, Նոր Ջուղայի վրայով ուղարկել էր Անդրկովկաս՝ հանձնելու հայոց կաթողիկոսին, Ղարաբաղի մելիքներին և Հերակլ II թագավորին, այսինքն այն անձանց, որոնց հետ մադրասցիները հույսեր էին կապել Հայաստանի ազատագրման իրենց ծրագրերում։ Կաթողիկոսի մի նամակից, գրված 1786 թ. երևում է, որ քարտեզները պարունակող ծանրոցը ճանապարհին ուշացել էր[30] և այդ մասին կաթողիկոսը 1786 թ. ապրիլին տեղյակ է պահել Հերակլ թագավորին[31] և մելիք Ավետիքին (1786 թ. նոյեմբերի 27-ին)[32]։ Ծանրոցը հասել է Էջմիածին 1787 թ. ապրիլի 17-ին և մի առ ժամանակ անց ուղարկվել ըստ պատկանելույն։ Հայտնի է նաև, որ դրանից շուրջ երեք տասնամյակ անց՝ 1816 թ., քարտեզի օրինակներից մեկը, ռուսերեն թարգմանությամբ նվիրվել է Ռուսաստանի Ալեքսանդր I թագավորին։ ՍՍՀՄ կենտրոնական ռազմապատմական արխիվում պահպանվել է քարտեզի այդ օրինակը[33], որի լուսանկարը հրատարակված է քարտեզին նվիրված ուսումնասիրության հետ միասին[34]։

Այս հոդվածում հրապարակված նյութերը թույլ են տալիս ասելու, որ Շ. Շահամիրյանի «Աշխարհացույցը» Էջմիածին է բերվել ավելի վաղ, քան մինչև այժմ հայտնի էր և բերողն է եղել Հ. Դինիբեկյանը։

---

28 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, էջ 258։

29 А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 152։

30 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 4501, էջ 81 բ։

31 Նույն տեղում, էջ 73ա։

32 Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 191 բ։

33 Центральный Государственный Военно-исторический архив СССР. ф. 416. д. 303.

34 Վ. Գրիգորյան, Շահամիր Շահամիրյանի «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ը. «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 353—362։

Կարծում ենք, որ վերոհիշյալ տեղեկությունները կարող են նպաստել Հովսեփ Դինիբեկյանի՝ այդ նշանավոր դիվանագետի և ճանապարհորդի կյանքն ու գործունեությունը բազմակողմանի և խոր ուսումնասիրության ենթարկելու գործին։

НОВЫЕ СВЕДЕНИЯ ОБ ОВСЕПЕ ДИНИБЕКЯНЕ

Доктор историч. наук В. Р. ГРИГОРЯН

(Резюме)

В черновиках неопубликованных писем и посланий армянского католикоса Гукаса Карнеци (1780—1799) сохранились аннотации трех писем, касающихся известного армянского путешественника Овсепа Динибекяна. Он служил при дворах грузинских царей Ираклия II и Георгия XII в звании пятисотника и неоднократно ездил в Индию с дипломатическими поручениями. Через него Ираклий II и армянские католикосы поддерживали письменную связь с видным деятелем армянского освободительного движения XVIII в. Шаамиром Шаамиряном, жившим в Мадрасе. С О. Динибекяном Ираклий II послал в Индию грамоту о пожаловании грузинского дворянства Ш. Шаамиряну.

Первый из публикуемых в статье документов — аннотация ответного письма католикоса Гукаса от 9 ноября 1781 г. Динибекяну, второй — аннотация написанного в тот же день письма о Динибекяне, адресованного духовному предводителю армян Грузии, архимандриту Карапету; третий — письмо (от 25 мая 1785 г.) Шаамиряну. В этих письмах, входящих в рук. № 2803 и 4481 Матенадарана им. Маштоца, говорится о том, что в 1778—1781 гг. Динибекян совершил поездку в Индию и привез оттуда письма и подарки католикосу от местных армян. Среди привезенных Динибекяном предметов была историческая карта Армении, опубликованная в 1778 г. в Венеции по заказу Шаамиряна.

В статье приводится также выдержка из документа (хранящегося в архивном отделе Матенадарана), который содержит список подарков, посланных Шаамиряном католикосу через Динибекяна. На основе армянских источников в статье приводятся сведения и о других путешествиях Динибекяна в Индию.